ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Հոգեբուժական օգնության մասին

ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3.

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **հոգեկան առողջություն՝** մարդու անօտարելի և անփոխանցելի ոչ նյութական բարիք, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, որոշումներ կայացնելու ու իրագործելու ունակությունը, կայուն հուզականության դրսևորումը և պահպանումը.

2) **հոգեկան առողջության պահպանում՝** մարդու հոգեկան առողջության ոլորտում հոգեկան խանգարումների կանխարգելում և այդ նպատակով համապատասխան աշխատանքների կազմակերպում ու իրականացում.

3) **հոգեկան խանգարում՝** հոգեկան և վարքի խանգարումների գործող հիվանդությունների միջազգային 10-րդ վերանայված դասակարգչի հոգեկան և վարքի խանգարումների դասին համապատասխանող հոգեկան անառողջ վիճակ կամ վարքի խանգարում.

4) **հոգեկան խանգարումով տառապող անձ՝** հոգեկան խանգարման հետևանքով հոգեբուժական օգնություն ստացող կամ այդ օգնության կարիքն ունեցող անձ.

5) **հոգեբուժական օգնություն՝** հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային ձևերով հոգեկան խանգարումով տառապող անձին տրամադրվող բժշկական խորհրդատվություն կամ հետազոտում կամ ախտորոշում կամ բուժում կամ խնամք ու սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն.

6) **հիվանդանոցային հոգեբուժական օգնություն՝** հոգեկան խանգարումով տառապող անձի հոգեկան խանգարման հետազոտում կամ ախտորոշում, բուժում կամ հոգեբուժական փորձաքննություն, որը կազմակերպվում է այն դեպքերում, երբ նրան անհրաժեշտ է անմիջական տնական հսկողություն և խնամք հիվանդանոցային պայմաններում.

7) **արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն՝** հոգեկան խանգարումով տառապող հիվանդների հայտնաբերում, հաշվառում ու շարունակական հսկողություն կամ հոգեբուժական փորձաքննություն կամ բուժում կամ սոցիալական վերականգնում արտահիվանդանոցային պայմաններում.

8) **դիսպանսերային հոգեբուժական օգնություն՝** քրոնիկ հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ արտահիվանդանոցային ձևով տնական հսկողության և բուժման իրականացում.

9) **հոգեբուժական կազմակերպություն՝** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական հաստատություն, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական և հոգեթերապևտիկ օգնության ու ծառայությունների իրականացումը.

10) **հոգեբուժական հիվանդանոց՝** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական հաստատություն, որի հիմնական խնդիրն է շուրջօրյա հոգեբուժական և հոգեթերապևտիկ օգնության ու ծառայությունների հիվանդանոցային ձևով իրականացումը.

11) **ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հոգեբուժական հիվանդանոցի կամ հոգեբուժական կազմակերպության կամ այլ բժշկական հաստատության կազմում գտնվող բաժանմունք, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական և հոգեթերապևտիկ օգնության ու ծառայությունների հիվանդանոցային ձևով իրականացումը.

12) **հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հոգեբուժական հիվանդանոցի կազմում գտնվող բաժանմունք, որտեղ դատարանի որոշմամբ ~~հարկադիր~~ *«ոչ հոժարակամ»* բուժման նպատակով գտնվում է այն անձը, որը հոգեկան վիճակով վտանգավոր է իր և այլ անձանց համար և պահանջում է մշտական հսկողություն և բուժում.

13) **հոգեբույժ՝** բարձրագույն բժշկական կրթություն և որակավորում ստացած և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հոգեբուժական օգնություն իրականացնող ֆիզիկական անձ.

14) **բժշկական (կլինիկական) հոգեբան՝** բարձրագույն հոգեբանական կրթություն ստացած և հոգեկան առողջության ոլորտում հետդիպլոմային կրթություն ստացած բժշկահոգեբանական ծառայություններ իրականացնող ֆիզիկական անձ.

15) **հոսպիտալացում՝** հոգեկան խանգարումով տառապող անձի հոժարակամ և ոչ հոժարակամ ~~(հարկադիր)~~ ձևերով ընդունում հոգեբուժական հաստատություն.

16) **հոգեբուժական հանձնաժողով՝** 3 կամ ավելի հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում նաև նյարդաբանից կազմված մասնագետների խումբ (նրանցից մեկը հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից), որ ստեղծվում է հոգեբուժական կազմակերպության տնօրենի հրամանով և իրավասու է տալ անձի հոգեկան վիճակի ու դրանից բխող բոլոր բժշկական հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն.

17) **իրազեկման թերթիկի ձև՝** լիազոր մարմնի կողմից հաստատված ձևի ձևաթուղթ, որում թվարկված են հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձի իրավունքները:

(3-րդ հոդվածը փոփ. 19.05.09 ՀՕ-127-Ն, խմբ. 07.10.09 ՀՕ-185-Ն, լրաց. 17.05.10 ՀՕ-89-Ն)

Հոդված 6. ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը երաշխավորվում է օրենքի, մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:

2. Հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և ազատությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3. Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք մասնավորապես իրավունք ունեն՝

1) հաստատելու նամակագրական կապ.

2) օգտվելու հեռախոսակապից.

3) հանդիպելու այցելուների հետ.

4) ունենալու և ձեռք բերելու առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվելու անձնական հագուստից.

5) հաղորդակցվելու թերթերի և լրագրերի միջոցով.

6) կոչվելու իր անվամբ կամ ազգանվամբ.

7) օգտվելու սոցիալական ապահովության իրավունքից.

8) ստանալու իրավաբանական օգնություն.

9) օգտվելու անձնական անվտանգության ապահովման իրավունքից.

10) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ.

11) օգտվելու իր նկատմամբ բարեկիրթ, անձը չնվաստացնող վերաբերմունքից.

12) տալու համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու բուժական մեթոդներից և միջոցներից, եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով.

13) պահանջելու իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին.

14) օգտվելու առողջության պահպանման իրավունքից, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննության ենթարկվելու իր նախընտրած բժշկի կողմից սեփական միջոցների հաշվին.

15) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում.

16) կնքելու քաղաքացիաիրավական գործարքներ, բացառությամբ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների.

17) անձնական ընդունելության խնդրանքով դիմելու հոգեբուժական կազմակերպության ղեկավարին, դրա գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին.

18) հետազոտման, բուժման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, անձամբ կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու հոգեբուժական կազմակերպության ղեկավարին, նրա վերադաս մարմնին, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին:

4. Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարում ունեցող անձինք իրազեկվում են իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին՝ դրանց վերաբերյալ նշում կատարելով բժշկական փաստաթղթերում: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրազեկման թերթիկի ձևը հաստատում է առողջապահության ոլորտում լիազոր պետական մարմինը:

5. Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրենց իրավունքներն իրականացնում են անձամբ կամ օրինական ներկայացուցչի միջոցով:

6. Հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրավունք ունեն քննվելու և վերաքննվելու բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-5-րդ, 15-րդ (բացառությամբ հանգստի և ութժամյա գիշերային քնի իրավունքի) և 16-րդ կետերով սահմանվող իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով կամ հետազոտող բժշկի կամ հոգեբուժական հանձնաժողովի կողմից, եթե դրանց իրականացումը վտանգ է ներկայացնում հիվանդի կամ հասարակության համար կամ խոչընդոտում է բժշկական հետազոտությանը կամ փորձաքննությանը: Հոգեբուժական հանձնաժողովի կամ հետազոտող բժշկի կայացրած որոշումները պետք է լինեն պատճառաբանված և պարտադիր ամրագրվեն բժշկական փաստաթղթերում: Նշված հիմքերով իրավունքների սահմանափակման մասին նույն օրը իրազեկվում է հոգեկան հիվանդությամբ տառապող անձը, և համապատասխան գրառում է կատարվում բժշկական փաստաթղթերում: Նշված հիմքերի վերացման դեպքում հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է նույն օրը սահմանափակումների վերացման մասին տեղեկացնել հիվանդին՝ համապատասխան նշում կատարելով բժշկական փաստաթղթերում:

8. Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրականացման ընթացակարգերը (այսուհետ՝ իրավունքների իրականացման ընթացակարգ) սահմանվում են սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելվածով:

9. Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող երեխաները ունեն սույն հոդվածի 3-րդ մասի 1-18-րդ կետերով, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավունքները:

10. Բուժման, հետազոտման, դուրսգրման հարցերով հոգեբուժական կազմակերպությանը դիմելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի 12-13-րդ և 18-րդ կետերով նախատեսված իրավունքներն իրականացնում է հոգեկան խանգարումներ ունեցող երեխայի օրինական ներկայացուցիչը:

11. Ոչ հոժարակամ ~~(հարկադիր)~~ հոսպիտալացման կամ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հոգեբույժի որոշմամբ հոգեկան խանգարմամբ տառապող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման (գոտիներ, հատուկ հագուստներ) ու մեկուսացման միջոցներ, հանդարտեցման բժշկական մեթոդներ, որոնց կիրառման ու տևողության մասին բժշկական փաստաթղթերում կատարվում է պատճառաբանված գրառում:

(6-րդ հոդվածը լրաց. 17.05.10 ՀՕ-89-Ն, խմբ. 23.05.11 ՀՕ-203-Ն)

Հոդված 15. Բուժում իրականացնելու համար համաձայնությունը

1. Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Բժիշկը պարտավոր է հոգեկան խանգարումով տառապող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին: Դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում) կատարվում է գրանցում:

3. Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կարող է իրականացվել առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության՝ միայն օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ ~~(հարկադիր)~~ հոսպիտալացման դեպքերում:

Գ Լ ՈՒ Խ 6.

ՈՉ ՀՈԺԱՐԱԿԱՄ ~~(ՀԱՐԿԱԴԻՐ)~~ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՈՒՄԸ

Հոդված 22. Ոչ հոժարակամ ~~(հարկադիր)~~ հոսպիտալացման կարգը

(վերնագիրը խմբ. 23.05.11 ՀՕ-203-Ն)

1. Հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե՝

1) նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ

2) բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում հոգեբուժական հանձնաժողովի կողմից հոսպիտալացման մասնագիտական հիմնավորվածությունը հաստատելու դեպքում համապատասխան հոգեբուժական կազմակերպության տնօրենը հոգեկան խանգարումներով տառապող անձի կողմից բուժումից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում, դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության ~~օրենսգրքի~~ *«օրենսգրքով»* ~~30-րդ գլխով~~ սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ ~~(հարկադիր)~~ բուժման ենթարկելու համար:

(22-րդ հոդվածը լրաց. 19.05.09 ՀՕ-127-Ն, խմբ. 07.10.09 ՀՕ-185-Ն, 23.05.11 ՀՕ-203-Ն)